№ 210 Նոյեմբերի 30 (Դեկտեմբերի 12) 1879 Նոյեմբերի 30 (Դեկտեմբերի 12) № 210

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Բաժանորդագրութիւն ընդունւում է միմիայն խմբագրատան մէջ։

Յօդւածները պէտք է ուղարկել Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի տօներից և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզւով։

Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր տողի 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թւին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՒԻ ԱՄԷՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի գինը և պայմանները նոյն են մնում։ Մինչ առաջուայ էին ԱՆՓՈՓՈԽ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվան 6 րուբլ։ Գրւել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախւում են 5 կոպէկով հատը

Օտար քաղաքներից պէտք է գրել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բագուի ապագան.—Ներքին տեսութիւն. Նամակ Քութայիսից. Նորին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Եւրոպա. Նամակ Փարիզից.—Խառն լուրեր.—Միջնակ նամակներ.—Յայտարարութիւններ.

ԲԱԳՈՒԻ ԱՊԱԳԱՆ

Օտարազգիները, մանաւանդ ամերիկացիները, որոնք գալիս են Անգլիայից և այցելում են Բագուի շրջակայքի նաւթի աղբիւրները, զարմացած են մնում տեսնելով բնութեան այդ հրաշալի հարստութիւնը։ Մի և նոյն ժամանակ նրանք չեն կարող չը նկատել որքան անխնայող կերպով վարւում են տեղացի արդիւնահանները նաւթային հարուստ նիւթի հետ։

Առհասարակ բնութեան մէջ ոչինչ յաւիտենական չը կայ. ինչպէս քարածուխի, կամ ուրիշ հանքի, այնպէս էլ նաւթի աղբիւրները կարող են սպառւել և մի անգամ թէև գուցէ հեռու ապագայում, անպատճառ կը սպառւին։ Ուրեմն բնութեան ամեն մի նիւթի հետ պէտք է խնայողաբար և գիտութեամբ վարւել, և ոչ թէ ի զուր վատնել բնութեան հարստութիւնները։ Պարզ է որ անխնայողաբար վարւելով բնութեան հարստութիւնների հետ, բնական արդիւնքները աւելի շուտ կը սպառւին, քան թէ եթէ մարդը խնայողութեամբ և խնայողաբար օգտւի բնութեան ամեն մի արդիւնքից։

Բայց ի՞նչ ենք տեսնում։ Բագւի նաւթի արդիւնահանութիւնը, ինչպէս Անդրկովկասի և Կովկասի բոլոր արդիւնահանութիւնները, գլխաւորապէս հայերի ձեռքումն է։ Իսկ հայը, մեծ մասամբ, ինչպէս է վերաբերւում դէպի ամեն արդիւնաբերութիւն կամ արդիւնահանութիւն... Հայը չնչին բաներում միշտ խնայող է, իսկ խոշոր բաներում վատնող է, այս հայի յատկանիշն է....

Բագւի մէջ գտնւում են այժմ բաւական շատ հայեր, որոնք հաւաքւել են այդտեղ մեր երկրի ամեն կողմերից։ Նրանց գրաւել է այդտեղ այն շահը, որ տալիս է նաւթի արդիւնահանութիւնը։ Բայց մեր հայերը հարստութեան ետևից ընկնելով անխնայող սպառում են բնութեան գանձերը։ Մի հարուստ հայ կապիտալիստ խնայում է մի երկու, երեք հազար րուբլ որ փոխ ի շահ օգնութիւն տայ մի մասնագէտ տեխնիկոսի, վարձում է էժան գնով մի տգէտ մշակ մարդու, որին նշանակում է գլխաւոր կառավարիչ իր նաւթի հորերի վրա, և կորցնում է այդպիսով նաւթի հազարաւոր տակառներ խորտակելով տարին.... Իսկ նաւթի այն քանակութիւնը որ նա ի զուր կորցնում է, անզգամաբար կերպով կորչում է և անօգուտ երկրի համար, որովհետև նաւթը թափւում է գետնի վրա, մեծ քանակութեամբ տարածւում է դաշտերի վրա, ծծւում է գետնի մէջ և անհետանում է։ Բացի սորանից այդքան թանգագին նիւթ կորչում է նոյն իսկ նաւթի մշակութեան ժամանակ, որովհետև նիւթի մշակութիւնն էլ լինում է անկանոն, չէ կատարւում գիտնական ձևով և խելացի մեթոդային համեմատ։

Տեսնում ենք տեղացի երկրատէրներ առաքում են ամեն տարի իրանց ամենաընտիր ուսումն առնելու բարձրագոյն դպրոցներում,—բայց հայ կապիտալիստը երբէք չի վարձի իր գործի համար մի մասնագէտ կառավարիչ, այլ աւելի լաւ կը համարի վարձել մի տգէտ, անգրագէտ քաղաքի մարդուն, որ մի կողմից կը գողանայ, իսկ միւս կողմից տգիտութեան պատճառով ի զուր կը վատնի բնութեան հարստութիւնները և այդպիսով աշխատանք կը պատճառի թէ իր տիրոջ և թէ երկրի արդիւնահանութեան.... Բայց փոյթ չէ հայ կապիտալիստին. նա կամենում է միայն էժան կառավարիչ ունենալ, իսկ հետևանքների մասին նա չէ մտածում.... Նա չէ մտածում որ այդպիսով նա անհամեմատ աւելի շատ է կորցնում, քան թէ եթէ մեծ ռոճիկ տար գիտնական մասնագէտ կառավարիչին....

Մենք տեսնում ենք որ Բագւի մէջ գտնւում են այժմ բաւական շատ հայեր։ Բագուն մեծ ապագայ ունի. որպէս հայաշատ և հարուստ քաղաք նա ժամանակով, գուցէ շատ մօտ ապագայում, կարող է դառնալ մեր երկրի երկրորդ մեծ կենտրոն, մանաւանդ երբ պատրաստ կը լինի Բագու-Թիֆլիսեան երկաթուղին, որի կառուցման պէտքն հաստատւած է կառավարութեանից։

Բայց եթէ հայ կապիտալիստները կը շարունակեն նաւթի արդիւնահանութեան վերաբերութեամբ իրանց բռնած անխնայող, անգիտական, անզգուշական, վատնող ընթացքը,—շատ ժամանակ չի անցնի և հայերը ամբողջովին կը լինեն գործից դուրս քշւել և նրանց տեղը կը բռնեն ռուս և օտարազգի կապիտալիստները։

Երբ որ այդ կը դառնայ կատարեալ իրողութիւն, այն ժամանակ հայերը կը հասկանան որքան անհաշիւ է մի կողմից խնայել անհրաժեշտ և համեմատաբար չնչին ծախսերում, և միւսից վատնել խոշոր քանակութեամբ, կորցնել և ոչնչացնել բնութեան հարստութիւնները։

Բագուն նշանաւոր է իր նաւթի հարստութեամբ. նա է գրաւել հայ ազգաբնակութիւնը։ Բայց երբ որ հայը իր անխելք վարմունքով ձեռքից կը թողնի նաւթի արդիւնահանութիւնը, Բագուն, որ կարող էր հայկական հարուստ քաղաք դառնալ, կարող էր դառնալ իր բազմամարդութեամբ և հարստութեամբ երկրի երկրորդ կենտրոն,—հեռանալով կը դատարկւի հայերից և կը բռնւի օտարազգիներով։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

9 Նոյեմբերի

[illegible]

[illegible]

[illegible]